Ի նմանութիւն՝ կամ լաւ ևս 'ի յիշատակ հին Ղրիմեցի Սուրբ Նշան վանքին շինած են Նախիջևանցիք այս նոր վանքս. այլ նախատիպը ոչ միայն իւր հնութեամբն՝ այլ և շատ մասամբ գերազոյն է քան զնորս։ Հնոյն վրայ մինչև ցայսօր յայտնի կ'երևայ հայկական ճարտարապետութեան ճաշակ, վեմութիւն, գեղեցկութիւն և ամրութիւն. միով բանիւ՝ ազգային պատմութեան տեղեակ ճանապարհորդը շօշափելով կը նշմարէ, որ այդ վեց դարուց վանքին շինութեան վրայ աշխատած են՝ զտարաբազդիկն Անի աննման գեղեցկութեամբ զարդարող քարակոփք։ Այլ մեք դառնալով այժմ դարձեալ Նախիջևանու Սուրբ Խաչին, Ղրիմեան Սուրբ Նշանի վրայ 'ի ստորև խօսիլ կը խոստանանք։

Վանքի ընդարձակ պարտէզը՝ մի միայն ամառուան տաքին ազատ շունչ առնելու տեղ է Նախիջևանցւոց համար. անշուշտ վանքին սրբազան հիմնադիրն այդ նպատակաւ տնկել տուած է այդ պարտէզը, որպէս զի Ղրիմու հովասուն լերանց և անտառաց սովոր ժողովուրդը հոս գալով առնու կարօտը կորուսեալ հայրենեաց։ Սրբազան առաջնորդն իւր նպատակին հասած է, այլ իմ կարծեաց Նախիջևանցիք անդր ևս անցած են հիմնադրին նպատակէն. զի Սուրբ Խաչ ոչ միայն Նախիջևանցւոց զբօսարան դարձուցեր են, այլ հասարակաց ճեմելեաց տեղի երկուց քաղաքաց՝ Նախիջևանու և Ռոստովի, ուր սահմանեալ օրեր՝ կու գան երեկոյին խուռն բազմութիւն ազգայնոց և օտարաց, և մինչև ցկէս գիշեր կը զբօսնուն վանքին պարտիզին մէջ, արք և կանայք, ուր կը հնչեն պարք երաժշտաց։ Թէպէտ և ես անձամբ ականատես չեղայ այդ հանդիսից, այլ 'ի պարտիզին տեսած տախ-